ՍԱՐԻ ՍԻՐՈՒՆ ՅԱՐ

Հազար նազով յար, հովերի հետ եկ,
Ծաղիկ փնջելով՝ սարվորի հետ եկ,
Սև ձիուս վրա, ձեր գյուղն եմ եկել,
Դուռդ փակ տեսել՝ մոլոր մնացել:

կրկնակ.
Սարի սիրուն յար, սարի մեխակ բեր,
Ա՜խ, չէ, ի՞նչ մեխակ, սիրո կրակ բեր:

Հազար մի ծաղկի մեջ ես մեծացել,
Ծաղկանց ցոլերով մազերդ թացել,
Մազերիդ բույրը հեռվից է գալիս,
Ձեփյուռը բերում սրտիս է տալիս:

կրկնակ.
Սարի սիրուն յար, սարի մեխակ բեր,
Ա՜խ, չէ, ի՞նչ մեխակ, սիրո կրակ բեր:

Երբ քո հայացքը երկնին ես հառում,
Վառ աստղերն ասես նոր լույս են առնում,
Քո ձայնն են առնում հավք ու հովերը՝
Ա՜խ, ե՞րբ կառնեմ ես քո մատաղ սերը:

կրկնակ.
Սարի սիրուն յար, սարի մեխակ բեր,
Ա՜խ, չէ, ի՞նչ մեխակ, սիրո կրակ բեր:

Սարից է գալիս, էս առվի ջուրը,
Բերում է, յար, քո բույրն ու համբույրը:

Աշո՛տ, թե կարաս քո երգ ու հանգով
Յարիդ կախարդիր, թող տուն գա հանդով: